ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 75-ԱՄՅԱԿԻՆ

Ապրիլի 17—20-ին ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Հայերի ցեղասպանություն. պատմություն, տեսություն, քաղաքական պատասխանատվություն» թեմայով միջազգային գիտաժողով՝ նվիրված Մեծ եղեռնի 75-ամյակին։ Գիտաժողովին, որն անց էր կացվում ՀԽՍՀ ԳԱ ընդհանուր ժողովի հետ համատեղ, մասնակցում էին ակադեմիայի անդամներ, նրա գիտական հիմնարկների ղեկավարներ, գիտնականներ Երևանից, Մոսկվայից, ինչպես նաև արտասահմանյան երկրներից՝ թվով 44 հոգի։ Գիտաժողովի բացմանը ներկա էին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Վ. Մ. Մովսիսյանը, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Ս. Մարգարյանցը, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Գ. Ա. Գալոյանը, ՀԿԿ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Գ. Ե. Ասատրյանը, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Յու. Ե. Խաչամիրյանը։ Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին Մեծ եղեռնի զոհերի հիշատակը։

Գիտաժողովը ներածական խոսքով բացեց ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նախորդ դարի երկրորդ կեսի և այս դարի սկզբի հայկական կոտորածները, մասնավորապես 1915 թ. Մեծ եղեռնը, ասաց նա, եղել են կանխամտածված ու ծրագրավորված ոճրագործություններ, որոնց հիմքում դրվել են որոշակի նպատակներ՝ նվազեցնել հայերի քանակությունը երկրում, և, եթե հնարավոր է, լրիվ ոչնչացնել նրանց, հարվածել հայերի անկախության ձգտումներին և դիմադրվել Ռուսաստանի ազդեցության տարածմանն Առաջավոր Ասիայում։ Թուրքիային հիմնականում հաջողվեց այս դարի սկզբին կատարել ցեղասպանության եղեռնագործությունը և ոչ միայն վերադարձնել առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանում իր կորցրած հայկական հողերը, այլև տիրել Կարսի մարզին, այստեղ ևս ոչնչացնելով հայկական տարրը։ Ցավոք, շարունակեց Վ. Հ. Համբարձումյանը, ժամանակի խորհրդային իշխանությունները հույս ունեին, թե քեմալական շարժումը կարող է վերածվել Արևելքում բաղձալի հեղափոխության մի կարևոր բաղադրիչի և Առաջավոր Ասիայում թուլացնել իմպերիալիզմի գաղութարարական քաղաքականությունը։ Օսմանցի ցեղասպաններն իրենց մասին իզուր չեն ասում՝ մեզ կարող են հաղթել ռազմադաշտում, բայց երբեք դիվանագիտական սեղանի շուրջ կամ գաղափարախոսության բնագավառում։ Սուտը և խաբեությունը նրանց ձեռքին ղորեղ զենք են։

1915 թ. դեպքերը, նշեց Վ. Հ. Համբարձումյանը, մինչև հիմա էլ շարունակում են խրախուսվել հայատյաց ուժերի կողմից։ Դրա վկայությունն են Սումգայիթի, Գանձակի և Բաքվի արյունահեղությունները։

Անցած երեք քառորդ դարում հայ ժողովուրդն իր ստեղծարար աշխատանքով այնպիսի հեղինակություն ձեռք բերեց ու այնպիսի նվաճումների հասավ, որ երբ 1988 թ. դեկտեմբերի 7-ի ահավոր երկրաշարժը ցնցեց մեր հայրենի հողը, գրեթե ողջ աշխարհը մեկ մարդու նման իր համերաշխության ձեռքը մեկնեց մեզ։ Սակայն մեծագույն սխալ կլիներ, եթե մեր վշտի ազդեցության տակ հանդես գանք հայցողի դերում։ Առաջին հերթին մենք ինքներս պետք է կառուցենք մեր տունը, սեփական աշխատանքով բազմապատկենք մեր ունեցվածքը, անենք ամեն ինչ, որպեսզի աշխարհը մեզ ճանաչի ոչ թե որպես «աստծուց մոռացված ժողովուրդ», այլ որպես շինարար. ստեղծագործ ազգ, որը ոչ միայն իր անցյալով, այլև ներկայով ու ապագայի միտումներով իր ուրույն ու նշանակալից տեղն ունի համաշխարհային քաղաքակրթության լուսեղեն մատյանում։

Վերջում Վ. Հ. Համբարձումյանը գիտաժողովի կարևոր խնդիրը համարեց, ի մի բերելով Մեծ եղեռնի պատմագիտական ուսումնասիրության արդյունքները, մերկացնել ցեղասպանությունը թաքցնելու, ծածկելու կամ արդարացնելու քաղաքականությունը, մշակել անհրաժեշտ միջոցներ, որպեսզի ցեղասպանությունը որպես երևույթ վերացվի մարդկության կյանքից։

Այնուհետև «Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը» թեմայով հանդես եկավ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը։ Հայ ժողովրդի բազմադարյան պատմությունն ունի ոչ քիչ արյունոտ էջեր, ասաց նա։ Այնուամենայնիվ, այն, ինչ 1915 թ. տեղի ունեցավ մեր ժողովրդի արևմտյան հատվածի հետ, արդեն մի ահավոր աղետ էր, իր ծավալով ու դաժանությամբ աննախադեպ մարդկության պատմության մեջ։ Այդ հրեշավոր ողբերգության

հեղինակ երիտթուրքերը նպատակ էին հետապնդում զանգվածային ջարդերի միջոցով իրենց հաշիվները մաքրել կայսրության ոչ թուրք ազգությունների, հատկապես հայերի, հույների, արաբների ու քրդերի հետ, որոնք դիտվում էին որպես լուրջ խոչընդոտներ պանթուրքիստական ծրագրերի իրականացման գործում։ Թուրք շովինիստներն իրենց առաջին հարվածն ուղղեցին հայերի դեմ, որպեսզի նրանց ֆիզիկական բնաջնջման միջոցով վերջ դնեն Հայկական հարցին և ճանապարհ հարթեն Կովկասը գրավելու համար։ Մ. Գ. Ներսիսյանը բերեց բազմաթիվ փաստարկներ, ժամանակակիցների վկայություններ, հիշատակեց փաստաթղթեր, որոնք հաստատում են հայերի զանգվածային տեղահանությունն ու կոտորածները, առանձնապես հրեշավոր անզգայությամբ իրագործվող մյուս չարագործությունները, անդրադարձավ հայերի պատշտպանական կռիվներին։ Նա միաժամանակ ցույց տվեց, որ պատմության թուրք կեղծարարները ձգտում են ժխտել արևմտահայության ցեղասպանության փաստը, ծուռ հայելու մեջ ներկայացնել պատմական իրողությունը։

Զեկուցողը ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ մեր օրերում՝ Մեծ եղեռնից տասնամյակներ անց, նորից գործում է վաղուց արդեն ծանոթ ջարդարար ազգայնականների բարբարոս քաղաքականությունը, հակահայկական մի քաղաքականություն, որի հետևանքով հարևան հանրապետությունում ու նրան բռնությամբ կցված Արցախում տեղի են ունենում հայության նոր կոտորածներ։ Այդպիսի իրողության մեջ, վերջում նկատեց Մ. Գ. Ներսիսյանը, մեր պարտքը պետք է լինի վճռականորեն դատապարտել հայերի ցեղասպանությունը, այդ արյունոտ անցքերի հեղինակներին, անել ամեն ինչ, որպեսզի հետագայում կանխվեն նման ոճրագործությունները։

«Հայերի ցեղասպանության ուսումնասիրությունը. պատմական մոտեցում» զեկուցմամբ հանդես եկավ ՀԽՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ Ռիչարդ Հովհաննիսյանը (ԱՄՆ)։ Նա հանգամանորեն խոսեց Թուրքիայի կառավարող շրջանների քաղաքականության մասին, որը նպատակաուղղված է հայկական ցեղասպանությունը մոռացության տալուն, այն ուրանալուն։ Նա մասնավորապես կանգ առավ ԱՄՆ-ի սենատի կողմից հայկական ցեղասպանության հարցի քննարկումը մերժելու պատճառների ու հանգամանքների վրա և նկատեց, որ, որևէ բացասական վերաբերմունք չունենալով հայերի նկատմամբ, ամերիկյան մի շարք սենատորներ, գործարար շրջանների մարդիկ, այնուամենայնիվ, չցանկացան իրենց տնտեսական շահերի հաշվին փչացնել հարաբերությունները Թուրքիայի հետ, հայերի օգտին փաստաթղթի ընդունմամբ «ենթադրելը» նրան։

Թեսսա Հոֆմանի (Արևմտյան Բեռլին) զեկուցման մեջ ներկայացվեցին 1915—1917 թթ. գերմանական փաստաթղթերն ու ականատեսների վկայությունները հայերի ցեղասպանության մասին։ Նա նշեց, որ գերմանական աղբյուրները հսկայական նշանակություն ունեն 1915 թ. Թուրքիայում կատարված դեպքերի հետազոտության համար, քանի որ Գերմանիան առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության ռազմական ու քաղաքական դաշնակիցն էր, անմիջականորեն գտնվում էր դեպքերի կենտրոնում։ Նշելով, որ ոչ բոլոր գերմանական փաստաթղթերն են արժանահավատ, զեկուցողը զրանք բաժանեց երեք խմբի։ Նա բարձր գնահատեց հատկապես գերմանացի միսիոներ, աստվածաբան Լեփսիուսի գրառումներն ու հուշագրությունները։

«Հայերի ցեղասպանությունը թուրքական ուսմունքի լույսի ներքո» զեկուցման մեջ Վ. Ա. Նազեին-Ռաևսկին (Մոսկվա) նշեց, որ պատմությունը վաղ թե ուշ իր պահանջները կներկայացնի նրանց, ովքեր խուսափում են պատմական ճշմարտությունից, ովքեր առանց խղճի խայթի կեղծում են պատմությունը, փորձելով կեղծ տեսություններով ու մոտեցումներով կառուցել իրենց սեփական ժողովրդի ապագայի հիմքը. նրանք՝ այդ գիտնականները, ըստ էության ոանշիդմի, մարտնչող շովինիզմի տեսությունն են դավանում։ Ժամանակակից Թուրքիայի պատմության մեջ այսպիսի դեր է խաղում պանթուրքիզմը՝ մի ագրեսիվ ռազմական դոկտրինա, որը միանգամայն անմեղ միլիոնավոր զոհերի աճյունների վրա կառուցված մեկ պետության մեջ թուրքական ժողովուրդների միավորում է քարոզում։ Դրա հետ մեկտեղ Թուրքիան, որի ձեռքերից մաքրված չեն միլիոնավոր հայերի, հույների, բուլդարների, սերբերի, քրդերի արյունը, հավակնում է քաղաքակրթության, իր իբր դեմոկրատական էության ճանաչման։

Դոնալդ Միլլերի և Լորնա Տուրյան-Միլլերի (ԱՄՆ) զեկուցումը նվիրված էր ականատես վերապրածների վկայությունների ներգրումը հայկական ցեղասպանության փաստական հիմնավորման գործում։ Թեմային։ Զեկուցման մեջ հիմնավորվեց, որ ցեղասպանության մասին ողջ ճշմարտությունը վերհանելու և նրա պատմությունն ամբողջացնելու համար արժանահավատ աղբյուր են նրանից փրկվածների վկայությունները։ Այդ իսկ պատճառով թուրքերը հաճախ են փորձում ստվեր գցել այդ կենդանի վկայությունների վրա, անհիմն պնդելով, թե ականատեսների պատմածը միակողմանի է և պատմական արժեք չունի։ Եթե հետևենք այդ

տրամաբանությանը, նշվեց զեկուցման մեջ, ապա առհասարակ հարկ է բոլոր ատյաններում հրաժարվել վկաների ցուցմունքներից։

«Ցեղասպանությունը և միջազգային իրավունքը» խորագրով զեկուցման մեջ պատմական գիտությունների թեկնածու Հ. Վ. Հակոբյանը (Երևան) անդրադարձավ ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիային, որի համաձայն ցեղասպանությունը դիտվում է իբրև ոճրագործություն մարդկության նկատմամբ։ Այդ կոնվենցիայի չափանիշներով է գնահատվում ոչ միայն արևմտահայության 1915 թ. ողբերգությունը, այլև Սումգայիթի և Բաքվի ողբերգական իրադարձությունները։ Ցեղասպանությունը կատարվել է հակահայկական ազգատեցության և կրոնական մոլեռանդության ու անհանդուրժողականության հողի վրա։ Չնայած ՄԱԿ-ի կոնվենցիան ցեղասպանության ենթարկված ժողովրդին փոխհատուցում չի նախատեսում, վերջում ասաց զեկուցողը, Թուրքերի կողմից բռնաղաղթված հայրենիքը վերադարձնելու պահանջը մեր համազգային աննահանջ պահանջն է և հարցի որևէ այլ լուծում չի կարող բավարարել հայ ժողովրդին։

Վանեզգ Տատոյանի (ԱՄՆ) զեկուցումը նվիրված էր հայերի ցեղասպանության մեջ Թուրք զինվորականների խաղացած դերին։ Զեկուցողը նկատեց, որ, ի տարբերություն հրեաների, հայ ժողովուրդը կոտորվեց իր բնօրրանի մեջ և հայերը չկարողացան հատուցում ստանալ, քանի որ Թուրքիան ասո այսօր ոչ միայն հրաժարվում է պատմական ճշմարտությունից, այլև վարպետորեն թաքցնում է այն։ Այնուհետև զեկուցողը բերեց բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են Թուրք զինվորականության ակտիվ մասնակցությունը հայկական կոտորածներին։

Քրիստոֆ Դինկելը (Շվեյցարիա) զեկուցեց «Գերմանական սպաները Օսմանյան կայսրությունում և հայերի ցեղասպանությունը» թեմայով։ Նա ցույց տվեց, որ հայերի ցեղասպանության գործում մեծ դեր խաղացին ոչ միայն Թուրք ասկյարները, այլև նրանց հետ համագործակցող գերմանական զինվորականությունը։ Նրանք էին իրագործում հայերի տեղահանությունը Կիլիկիայում, Ուրֆայում, Զեյթունում, Մուսալեռում։ Գերմանական բարձրաստիճան սպաները ղեկավարում էին Թուրք զինվորների գործողությունները։ Նրանք պլանավորեցին և ղեկավարեցին նաև Թուրքերի հարձակումը Կովկասի վրա։ Կայզերական Գերմանիան ատամներով պաշտպանում էր իր արյունարբու դաշնակցին, որը սառնասիրտ և հաշվենկատ իրագործեց հրեշավոր ցեղասպանությունը։

Պատմական գիտությունների դոկտոր Ռ. Գ. Սանակյանի (Երևան) զեկուցումը նվիրված էր Մեծ եղեռնի շուրջ Ֆրանսիայում 1960—1980-ական թվականներին լույս տեսած պատմագիտական գրականության քննական վերլուծությանն ու արժեքավորմանը։ Նա նշեց, որ ֆրանսիական պատմաբանները, չնչին բացառությամբ, հարցը հետազոտում են գիտական անաչառությամբ, շրջանառության մեջ դնում նոր փաստաթղթեր ու նյութեր, փաստարկված պատասխան տալիս ժամանակակից Թուրքական պատմագիտության կողմից պրոպագանդվող պաշտոնական վարկածին, որը նպատակ ունի արդարացնել կատարվածը և ժխտել այն ժամանակվա Թուրքական կառավարության անմիջական պատասխանատվությունն արևմտահայերի զանգվածային շարդերի համար, շարդեր, որոնք ֆրանսիական պատմաբանները որակում են իբրև ցեղասպանություն։ Միաժամանակ զեկուցողը վեր հանեց առանձին պատմաբանների անբարեխղճությունը՝ ցույց տալով նրանց Թուրքանպաստ փաստարկների սնանկությունը։

Պատմական գիտությունների թեկնածու Ա. Հ. Փափազյանը (Երևան) «1919 թ. երիտԹուրքերի դատավարության փաստաթղթերի գնահատման հարցի մասին» խորագրով զեկուցման մեջ նկատեց, որ Թուրք պետական գործիչները եռանդուն արշավ են սկսել հայերի ցեղասպանությունը ժխտելու ուղղությամբ։ Նրանք մի կողմից հայտարարում են, որ Թուրքիան իր արխիվները բացել է գիտնականների առաջ, մյուս կողմից պնդում են, թե այնտեղ ընդհանրապես չկան փաստաթղթեր՝ հայերի ցեղասպանությունը ապացուցելու համար և որ դա հայերի երևակայության արդյունքն է։ Սակայն, ըստ գոյություն ունեցող կարգի, հայերի ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթերի բնագրերը պետք է որ պահված լինեն Ստամբուլի արխիվներում, իհարկե, եթե դրանք նախապես չեն թաքցվել Թուրքական այժմյան իշխանությունների կողմից։ Կասկածից վեր է, ասաց զեկուցողը, որ Ստամբուլում 1919—1920 թթ. երիտԹուրքերի դատավարության նիստերում բերված և նահանգապետերի կնիքով ու ստորագրությամբ հաստատված հեռագրերը, նամակները, հրահանգները, այլ բնույթի գրությունները հայերի ցեղասպանության անհերքելի ապացույց են և պետք է որ պահված լինեն Ստամբուլի արխիվներում։

«Ռասիզմը և ցեղասպանությունը» թեմայով Ա. Ռ. Հովհաննիսյանի (Երևան) հաղորդումը նվիրված էր ռասիզմի Թուրքական տարատեսակների՝ Թուրքիզմի, պանԹուրքիզմի և պանԹուրանիզմի գաղափարախոսությունների վերլուծությանը։ Նա նշեց, որ Թուրքիայում ռասսայական առաջին տեսությունների երևան գալը տեղի է ունեցել անցյալ դարի կեսերին։

Թուրքական ռասիզմն առավելապես խտացված ձևով արտահայտվեց Զիա Գյոքալպի տեսությունում, որի գործնական դրսևորումներից մեկը եղավ հայերի ցեղասպանությունը։

Գիտաժողովում լսվեցին բազմաթիվ այլ զեկուցումներ ու հաղորդումներ՝ նվիրված համաշխարհային պատմության ամենաարյունոտ ու բարբարոսական էջերից մեկի տարբեր խնդիրների ուսումնասիրությանը։ Գիտաժողովի աշխատանքի ընթացքում աշխարհի շատ երկրների հետազոտողներ, որոնք զբաղվում են ցեղասպանության խնդրի քննությամբ, հանգեցին այն միանշանակ կարծիքին, որ անհրաժեշտ է ակտիվացնել համատեղ գործունեությունն այդ ասպարեզում։ Դա առավել ևս անհրաժեշտ է, քանի որ արխիվային, դիվանագիտական և պետական բազմաթիվ փաստաթղթեր սփռված են աշխարհով մեկ։ Եզրափակիչ նիստում գիտաժողովի մասնակիցները միահամուռ դատապարտեցին հայերի ցեղասպանությունը՝ որպես մարդկության դեմ կատարված ծանրագույն ոճրագործություն։ Գիտաժողովը նպատակահարմար համարեց դիմել Հայաստանի գիտությունների ակադեմիային՝ առաջարկելով ներկայացված զեկուցումները ու հաղորդումները հնարավորին չափ սեղմ ժամկետում հրատարակել առանձին գրքով, ցանկալի է՝ երկու-երեք լեզվով։